

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«13» ապրիլ 2018թ.

No 1016 - Ա

ԻՆՖԵԿՏԻԱՅՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳԼՈՄԵՐՈՒԼՈՆԵՖՐԻՏՆԵՐՈՎ
ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.3 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման 12-րդ կետի «դ» ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Ինֆեկցիայով պայմանավորված գլոմերուլոնեֆրիտներով պացիենտների վարման կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի խորհրդական Արմեն Փարսադանյանին՝ սույն հրամանը հաստատումից հետո սեղմ ժամկետում ապահովել ուղեցույցի մուտքագրումը միասնական էլեկտրոնային առողջապահության համակարգ:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

Ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

4. Հայաստանի Հանրապետության բժշկական կազմակերպությունների տնօրեններին՝ սույն հրամանով հաստատված ուղեցույցը ընդունել ի գիտություն:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ս.Խաչատրյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Լ.ԱԼԹՈՒՆՅԱՆ

ԻՆՖԵԿՏԻԱՅՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳԼՈՄԵՐՈՒԼՈՆԵՖՐԻՏՆԵՐՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփ տեսություն

Ուղեցույցի նպատակն է տրամադրել ինֆեկցիայով պայմանավորված գլոմերուլոնեֆրիտների ախտորոշման և բուժման վերաբերյալ ապացուցողական խորհուրդներ՝ բարելավելով պացիենտների վարման ելքերը:

Մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Հայ երիկամաբանների, հեմոդիալիզի բժիշկների և տրանսպլանտոլոգների ասոցիացիայի կողմից: Փաստաթղթի հիմնական գրականության աղբյուրն է հանդիսացել Kidney Disease: Improving Global Outcomes (KDIGO) աշխատանքային խմբի կողմից 2012թ.հրապարակված ուղեցույցը (KDIGO Clinical Practice Guideline for Glomerulonephritis), ինչպես նաև PubMed, EMBASE, Cochrane Library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարանների արդի տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation, GRADE): Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Բոլոր խորհուրդները քննարկվել և հավանության են արժանացել Հայ երիկամաբանների, հեմոդիալիզի բժիշկների և տրանսպլանտոլոգների ասոցիացիայի անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման՝ յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ պայմանավորված տվյալ ոլորտում նոր

գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալով: Ուղեցույցը նախատեսված է այն մասնագիտացված նեֆրոլոգիական բաժանմունքների համար, որտեղ հնարավոր է իրականացնել հիվանդության հյուսվածաբանական ախտորոշում, առկա է իմունասուպրեսիվ դեղերի օգտագործման փորձ և մասնագիտական գիտելիքներ:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա՝ ուղեցույցում լուսաբանվել են ինֆեկցիայով պայմանավորված գլոմերուլոնեֆրիտների տեսակները, ախտորոշման մեթոդները, որոշակի ընդունված ձևակերպումներն ու բնորոշումները, բուժման նորագույն միջազգային մեթոդները: Առաջարկվել են ներդրման տարբերակները և աուդիտի ցուցանիշները:

Եզրակացություններ

Չնայած այն փաստին, որ շատ խորհուրդներ ունեն թույլ ապացուցողական ուժ, այնուամենայնիվ, այս մեթոդաբանությամբ մշակված տեղեկատվությունն ինֆեկցիայով պայմանավորված գլոմերուլոնեֆրիտների բուժման արդյունքների բարելավման հիմքն է:

Հիմնական բառեր

Ապացուցողական բժշկություն, ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, ուղեցույցներ, ինֆեկցիայով պայմանավորված գլոմերուլոնեֆրիտներ, հետինֆեկցիոն գլոմերուլոնեֆրիտներ, շունտ – նեֆրիտներ, նեֆրոտիկ համախտանիշ, հեպատիտ B-միջնորդված գլոմերուլոնեֆրիտներ, հեպատիտ C-միջնորդված գլոմերուլոնեֆրիտներ:

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: Ֆինանսավորող կառույցը ոչ մի ազդեցություն չի ունեցել սույն ուղեցույցի մշակման որևէ փուլի վրա: Շահերի բախում չի արձանագրվել:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում:

Բովանդակություն

- Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն
- Հետինֆեկցիոն ԳՆ
- Հետստրեպտակոկային ԳՆ
- ԳՆ՝ պայմանավորված ինֆեկցիոն էնդոկարդիտով
- Շունտ – նեֆրիտներ
- HCV – միջնորդված /նույնականացված/ ԳՆ
- HBV – միջնորդված ԳՆ
- ՄԻԱՎ վարակ – նույնականացված գլոմերուլյար հիվանդություններ
- Մալարիային նեֆրոպաթիա
- Տնտեսական նկատառումներ
- Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ
- Գրականության ցանկ
- Աղյուսակ 5. Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ
- Աղյուսակ 6. Ուղեցույցի առանցքային խորհուրդների ամփոփում

Հապավումներ

- ԱԸՊ անգիոտենզինային ընկալիչների պաշարիչ
- ԱՓՖ անգիոտենզին փոխակերպող ֆերմենտ
- ԳՆ գլոմերուլոնեֆրիտ
- ՄՊԳՆ մեմբրանոպրոլիֆերատիվ գլոմերուլոնեֆրիտ
- ՄՆ մեմբրանոզ նեֆրոպաթիա

- ՖՍԳՍ ֆոկալ – սեգմենտալ գլոմերուլոսկլերոզ
- ՍԱ սրտային անբավարարություն
- ՁՀ զարկերակային հիպերտենզիա
- ԵԱ երիկամային անբավարարություն
- հ/բ հակաբիոտիկ
- C3 կոմպլեմենտի C3 ֆրակցիա
- IgG իմունագլոբուլին Ջ
- IgM իմունագլոբուլին Մ
- IgA իմունագլոբուլին Ա
- ԵՖ երիկամային ֆունկցիա
- ՔԵՀ քրոնիկական երիկամային հիվանդություն
- ՆՓՀ նվազագույն փոփոխությունների հիվանդություն
- ԿՔ կրեատինինային քլիրենս
- ՊԵՀ պրոգրեսիվող երիկամային հիվանդություն
- ՁԻԱՀ ձեռքբերովի իմուն անբավարարության համախտանիշ
- ՄԻԱՎ մարդու իմուն անբավարարության վիրուս
- ՄԻԱՎ-ԱՆ ՄԻԱՎ ասոցացված նեֆրոպաթիա
- ԲԱՀՌԹ բարձր ակտիվությամբ հակառետրովիրուսային թերապիա
- ՆՀ նեֆրոտիկ համախտանիշ
- ՍԵԱ սուր երիկամային անբավարարություն
- ՌՆԹ ռիբոնուկլեինաթթու
- ՊԲՎՓ պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում
- IFN (ԻՖՆ) ինտերֆերոն
- ՎՓԵՀ վերջին փուլի երիկամային հիվանդություն
- ՔԵՀ քրոնիկական երիկամային հիվանդություն
- eGFR հԿՖ (հաշվարկված կծիկային ֆիլտրացիա)
- NG Չդասակարգված

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Հայ երիկամաբանների, հեմոդիալիզի բժիշկների և տրանսպլանտոլոգների ասոցիացիայի կողմից: Փաստաթղթի հիմնական գրականության աղբյուրն է հանդիսացել Kidney Disease: Improving Global Outcomes (KDIGO) աշխատանքային խմբի կողմից 2012թ. հրապարակված ուղեցույցը (KDIGO Clinical Practice Guideline for Glomerulonephritis), ինչպես նաև PubMed, EMBASE, Cochrane Library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարանների արդի տվյալները: Գրականության աղբյուրներն ընտրվել են հիմնական բառերի օգնությամբ իրականացված համակարգային որոնման հիման վրա: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ուղեցույցների ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն և ցանկացած խորհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս, սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթում հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE): Համաձայն այս համակարգի, տեղեկատվության որակը կարող է տատանվել շատ բարձր (A) մակարդակից մինչև շատ ցածր (D) մակարդակ: Որակի մակարդակը որոշվում է հիմքում ընկած հետազոտությունների բնույթով՝ ամենաբարձր մակարդակը շնորհվում է պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկումներին (ՊԲՎՓ), մինչդեռ, փարձագետների կարծիքը կամ այլ ոչ համակարգված տեղեկատվությունն ունի ամենացածր որակը: Սույն ուղեցույցում **§2 դասակարգված** (Not Graded, NG) կարգավիճակը, շնորհվել է այն խորհուրդներին, որոնց վերաբերյալ, չնայած առկա օգուտների և վնասների հստակ ապացույցների, ֆորմալ GRADE մեթոդաբանությամբ վերջիններիս գնահատումը չափազանց խնդրահարույց է: Նմանատիպ խորհուրդների օրինակներից են՝ մոնիթորինգի հաճախականությունը, ուղղորդումն այլ մասնագետների և այլն: Խորհուրդների մակարդակը դասվել է իբրև §1 և §2, որոնց համապատասխանում են **§խորհուրդ է**

տրվում | և **§Առաջարկվում է** | ձևակերպումները: Կիրառված GRADE-ի վերաբերյալ մասնաճյուղային տես՝ Աղյուսակ 5-ում:

1. **Ստորև բերվող ինֆեկցիայով պայմանավորված գլոմերուլոնեֆրիտների համար առաջարկվում է հիմքում ընկած ինֆեկցիոն հիվանդության պատշաճ բուժում և երիկամային դրսևորումների վարման ստանդարտ մոտեցումներ՝ (2D)**
 - **Հետինֆեկցիոն ԳՆ**
 - **Ինֆեկցիոն էնդոկարդիտ - նույնականացված ԳՆ**
 - **Շունտ – նեֆրիտ**

Նախաբան

Սույն բաժնում ներկայացված են ինֆեկցիայով պայմանավորված ԳՆ-ի բուժման հանձնարարականները:

Հետինֆեկցիոն ԳՆ-ները կարող են կապված լինել մանրէային, վիրուսային, սնկային, պարազիտար և հելմինթային վարակների հետ՝ աղյուսակ 1:

Մանրէային ինֆեկցիայով պայմանավորված ԳՆ-ներ /Հետինֆեկցիոն ԳՆ-ներ Առկա տվյալներ

Հետինֆեկցիոն ԳՆ-ի տարբերակ է հետստրեպտակոկային ԳՆ-ը, որը հաճախ հայտնվում է երեխաների մոտ ստրեպտակոկի որոշ նեֆրիտոգեն շտամներով հարուցված ֆարինգիտային կամ մաշկային ինֆեկցիաներից հետո և սովորաբար ունենում է բարենպաստ ելք:

Այնուամենայնիվ, վերջին տասնամյակների ընթացքում հետինֆեկցիոն ԳՆ-ի կառուցվածքը փոխվել է: Հետստրեպտակոկային ԳՆ-ի դեպքերի թիվը, մասնավորապես, դրա համաճարակային բռնկումները խիստ նվազել են զարգացած երկրներում: Վերջին տվյալներով, ստրեպտակոկային վարակը կազմում է սուր նեֆրիտների ընդհանուր թվի 28-47%, *Staphylococcus aureus* and *Staphylococcus epidermidis* անջատվել են 12-24% դեպքերում, իսկ գրամ-բացասական մանրէները՝ 22%

դեպքերում: /1-3/ Մանրէային էնդոկարդիտը և շունտ-նեֆրիտները հաճախ նույնականացվում են հետինֆեկցիոն ԳՆ-ի հետ: Ավելին, ատիպիկ հետինֆեկցիոն ԳՆ հանդիպում է ընկճված իմունային համակարգով մեծահասակների մոտ, օրինակ, ավկոհոլիզմ, շաքարային դիաբետ, դեղորայքային կախվածություն, մինչդեռ, երեխաներին, որպես կանոն, բնորոշ է ինքնակա լավացումը մի քանի շաբաթվա ընթացքում: Կանխորոշումը մեծահասակների շրջանում զգալիորեն վատն է, երկարատև դիտարկման դեպքում տևական ռեմիսիայի ցուցանիշը < 50% - ից: /3/

ՀԵՏՍՏՐԵՊՏԱԿՈԿԱՅԻՆ ԳՆ

Առկա տվյալներ

Հետստրեպտակոկային ԳՆ-ի ախտորոշումը պահանջում է նախորդող ստրեպտակոկային ինֆեկցիայի առկայություն և կլինիկորեն ներկայանում է սուր ԳՆ-ի պատկերով: Նեֆրիտը զարգանում է ստրեպտակոկային տոնզիլիտից 7-15 օր հետո և իմպետիզոյից 4-6 շաբաթ հետո: /5/

Նեֆրիտոզեն ստրեպտակոկային հակաձինի բնույթը դեռևս լիովին պարզաբանված չէ: /5-7/ Երիկամային բիոպսիան ցուցված չէ, քանի դեռ չկան ախտորոշումը կասկածի տակ դնող նշաններ կամ չկա կանխատեսման և/կամ հնարավոր թերապևտիկ նպատակների գնահատման անհրաժեշտություն: Երիկամի բիոպտատում դիտվում է սուր ներմազանոթային ԳՆ-ի պատկեր՝ մեզանգիալ և մազանոթային գրանուլյար իմուն կուտակումներով:

Սուր նեֆրիտիկ համախտանիշի կլինիկական դրսևորումը տևում է մինչև երկու շաբաթ: Սուր հետստրեպտակոկային ԳՆ-ով <4 % երեխաների շրջանում դիտվում է զանգվածային պրոտեինուրիա և երբեմն դիտվում է կիսալուսնաձև ԳՆ-ի երիկամային ֆունկցիայի արագ վատացում: Պլազմայի կոմպլեմենտի ցուցանիշները սովորաբար նորմալանում են ինֆեկցիայից 8-10 շաբաթ անց: Երեք ամսից ավել տևող կայուն հիպոկոմպլեմենտեմիան կարող է երիկամի բիոպսիայի համար ցուցում լինել, եթե այն դեռ չի կատարվել: Նման դեպքերում հյուսվածաբանորեն հաճախ հայտնաբերվում է ՄՊԳՆ:

Հետստրեպտակոկային ԳՆ-ի սուր փուլում հիվանդության կարճատև կանխատեսումը երեխաների մոտ գերազանց է, այնուամենայնիվ, որոշ դեպքերում մահացությունը մեծահասակների շրջանում հասնում է 20%-ի: Չնայած տևական կանխատեսումը մնում է վիճելի՝ ՎՓԵՀ հաճախականությունը տարեկան դիտարկման դեպքում <1%: Բացառություն են կազմում կայուն պրոտեինուրիա զարգացրած մեծահասակները: /5,6/ Հստակ ախտորոշված ստրեպտակոկային վարակը պետք է բուժել պենիցիլինով կամ էրիթրոմիցինով, եթե պացիենտն ալերգիկ է պենիցիլինի նկատմամբ՝ կանխարգելելու նեֆրիտոզեն շտամների տարածումը հարազատների կամ շփվողների շրջանում: Այնուամենայնիվ, հակաբիոտիկները չեն կանխարգելում ԳՆ-ի զարգացումը, քանի որ այդ փուլում իմուն կոմպլեքսներով հարուցված կծիկների վնասումն արդեն ձևավորված է լինում:

Սուր նեֆրիտիկ համախտանիշը, մասնավորապես, մեծահասակների շրջանում, պահանջում է ստացիոնար հսկողություն, առավել ևս, երբ առկա են ՋՀ կամ կանգային ՍԱ նշաններ: ՋՀ և այտուցները սովորաբար պակասում են դիուրեզի վերականգնումից հետո: Մեծահասակները, ովքեր ունեն կայուն միզային անոմալիաներ վեց ամսից ավելի տևողությամբ, հատկապես, երբ պրոտեինուրիան > 1 գ/օր, պետք է ստանան ԱՓՖ ինհիբիտորներ կամ ԱԸՊ, ինչպես այլ գլոմերուլոպաթիաների ժամանակ, որոնք ուղեկցվում են պրոտեինուրիաներով: Տևական կանխատեսումն ավելի վատն է այն պացիենտների մոտ՝ հիմնականում մեծահասակ, ովքեր ունեն վեց ամսից ավելի տևող կայուն պրոտեինուրիա: /8/

Մեթիլարեդնիզոլոնի պուլս-թերապիա պետք է սկսել այն պացիենտներին, ովքեր հյուսվածաբանորեն ունեն արագ պրոգրեսիվող ԳՆ-ի պատկեր և տարածուն կիսալուսիններ՝ հիմնվելով արագ պրոգրեսիվող և կիսալուսնաձև նեֆրիտների այլ տեսակների բուժման սկզբունքների վրա՝ չնայած ապացուցողական տվյալներով ՊԲՎՓ չկան:

Ինֆեկցիաները՝ նույնականացված ԳՆ-ի հետ

Մանրէային	Վիրուսային
<ul style="list-style-type: none"> Ø Mycobacterium leprae, M. tuberculosis Ø Treponema pallidum Ø Salmonella typhi, S. paratyphi, S. typhimurium Ø Streptococcus pneumonia, S. viridans, S. pyogenes Ø Staphylococcus aureus, S. epidermidis, S. albus Ø Leptospira species^a Ø Yersinia enterocolitica^a Ø Neisseria meningitides, Neisseria gonorrhoeae^a Ø Corynebacterium diphtheria^a Ø Coxiella burnettii^a Ø Brucella abortus^a Ø Listeria monocytogenes^a 	<ul style="list-style-type: none"> Ø Hepatitis B and C Ø HIV Ø Epstein – Barr virus Ø Cocksackie B Ø ECHO virus Ø CMV Ø Varicella zoster Ø Mumps Ø Rubella Ø Influenza
Սնկային	Նախակենդանիներ
<ul style="list-style-type: none"> Ø Histoplasma capsulatum^a Ø Candida^a Ø Coccidioides immitis^a 	<ul style="list-style-type: none"> Ø Plasmodium malariae, P. falciparum Ø Leishmania donovani Ø Toxoplasma gondii Ø Trypanosoma cruzi, T. bruci Ø Toxocara canis^a Ø Strongyloides stercoralis^a
Հելմինթոզներ	
<ul style="list-style-type: none"> Ø Schistosoma mansoni, S. japonicum, S. haematobium Ø Wuchereria bancrofti Ø Brugia malayi Ø Loa loa Ø Onchocerca volvulus Ø Trichinella spiralis^a 	

ECHO, enteric cytopathic human orphan

a – նկարագրված են միայն կլինիկական դեպքեր

ԳԼՈՍԵՐՈՒԼՈՆԵՖՐԻՏՆԵՐ՝ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԻՆՖԵԿՑԻՈՆ ԷՆԴՈԿԱՐԴԻՏՈՎ

Առկա տվյալներ և հիմնավորում

Ինֆեկցիոն էնդոկարդիտով պայմանավորված ԳՆ-ի բնական պատմությունն ուժգնորեն փոփոխվել է հիվանդության համաճարակաբանության փոփոխմանը և հակաբիոտիկների կիրառմանը զուգընթաց: /8-11/

ԱՄՆ-ում տարեկան ախտորոշվում է մոտ 40 դեպք 1 միլիոն բնակչության հաշվով և հիվանդությունն ավելի ու ավելի հաճախ է նկատվում տարեցների և այն պացիենտների շրջանում, ովքեր չունեն սրտային ախտահարում՝ ն/ե դեղերի ընդունումը, սրտի պրոթեզները և կառուցվածքային սրտային խնդիրը ռիսկի գործոններ են: Staph. Aureus փոխարինել է կանաչեցնող ստրեպտակոկին /Streptococcus viridans/ որպես ինֆեկցիոն էնդոկարդիտի հիմնական պատճառ: Ոսկեգույն ստրեպտակոկի հետ նույնականացված էնդոկարդիտի դեպքերի թիվը տատանվում է 22-78%, ռիսկի խմբում են ն/ե դեղեր ընդունողները: Ամենատիպիկ հյուսվածաբանական պատկերն է օջախային սեզմենտալ պրոլիֆերատիվ ԳՆ-ն՝ հաճախ օջախային կիսալուսիններով: Որոշ պացիենտների մոտ էլ հայտնաբերվում են առավել դիֆուզ պրոլիֆերատիվ ներմազանոթային ախտահարումներ՝ կիսալուսիններով կամ առանց դրանց: /8-11/

Հիվանդության անմիջական ելքը բարենպաստ է և կապված է ինֆեկցիայի արագ էռադիկացիայի հետ՝ կիրառելով համապատասխան հակամանրէային բուժում՝ 4-6 շաբաթ տևողությամբ:

1. Շունտ-նեֆրիտ

Առկա տվյալներ և հիմնավորում

Շունտ-նեֆրիտը իմուն-կոմպլեքս միջնորդված ԳՆ է, որը զարգանում է որպես հիդրոցեֆալիայի բուժման նպատակով տեղադրված վենտրիկուլոատրիալ կամ վենտրիկուլոյուգուլյար շունտերի քրոնիկական ինֆեկցման հետևանք: /12/

Ախտորոշումը հիմնվում է երիկամային հիվանդության կլինիկական ապացույցի վրա /առավել հաճախ, միկրոսկոպիկ հեմատուրիա և պրոտեինուրիա, հաճախ

զանգվածային, հազվադեպ ցուցանիշներ են նաև բարձրացած պլազմայի կրեատինինը և հիպերտենզիան/ տևական տենդով կամ քրոնիկական ինֆեկցիայի նշաններով, այն պացիենտների շրջանում, ում տեղադրվել է փորոք-անոթային շունտ՝ հիդրոցեֆալիայի բուժման նպատակով: Հյուսվածաբանական պատկերը բնորոշ է տիպ մեկ ՄՊԳՆ-ին՝ C3, IgG, IgM հատիկավոր կուտակումներով և էլեկտրոն-խիտ մեզանգիալ և սուբէնդոթելային կուտակումներով:

Երիկամային ելքը բարեհաջող է ինֆեկցիայի վաղաժամ հայտնաբերման և բուժման դեպքում: Փորոք-անոթային շունտերը կարող են ինֆեկցվել դեպքերի 30%-ում, որոնցից ԳՆ-ի զարգացումը հանդիպում է 0.7-2% դեպքերում: Ինֆեկցիոն ազենտները սովորաբար Staph. Aureus կամ Staph. epidermidis-ն են:

Ի տարբերություն փորոք-անոթային շունտերի, վենտրիկուլոպերիտոնյալ շունտերը հազվադեպ են բարդանում ԳՆ-ով:

Ուստի, ինֆեկցիայի ուշ ախտորոշումը, որին հաջորդում է ուշացած հ/բ թերապիան և շունտի ուշ հեռացումը, կապված են առավել վատ կանխատեսման հետ:

2. HCV-ՄԻՋՆՈՐԴ-ՎԱԾ ԳՆ

2.1.1 **և 2 շրջանի ՔԵՀ և ԳՆ HCV – ինֆեկցված պացիենտների շրջանում, առաջարկվում է համակցված հակավիրուսային բուժում՝ օգտագործելով պեգիլացված ինտերֆերոն և ռիբավիրին, ինչպես ընդհանուր պոպուլյացիայում: (2C) /հիմնված KDIGO HCV առաջարկների վրա/**

Ø **Տիրել ռիբավիրինի դեղաչափն ըստ պացիենտի տոլերանտության և երիկամային ֆունկցիայի: (NG)**

2.2.**ՔԵՀ 3, 4, 5 շրջաններում և ԳՆ՝ դեռ ոչ դիալիզի շրջանում, HCV ինֆեկցված պացիենտների շրջանում, առաջարկվում է պեգիլացված ինտերֆերոնով մոնոթերապիա՝ ԵՖ-ին հարմարեցված դեղաչափերով: (2D)**

2.3. **HCV և նեֆրոտիկ պրոտեինուրիայով կամ ՊԵՀ մասին տվյալներով կամ կրիոգլոբուլինեմիայի սուր բռնկմամբ խառը կրիոգլոբուլինեմիայով**

պացիենտներին /IgG/IgM/ առաջարկվում է կամ պլազմաֆերեզ, ռիտուքսիմաբ կամ ցիկլոֆոսֆամիդ՝ մեթիլպրեդնիզոլոնի հետ համատեղ և ուղեկցող հակավիրուսային թերապիա: (2D)

Առկա տվյալներ

HCV ինֆեկցիան հանդիսանում է առողջապահական մեծ խնդիր՝ աշխարհում հաշվարկված են 130-170 միլիոն ինֆեկցված մարդ /14,15,101/: HCV հաճախ հանդես է գալիս արտալյարդային դրսևորումներով՝ խառը կրիոգլոբուլինեմիա, լիմֆոպրոլիֆերատիվ հիվանդություններ, Շյոգրենի համախտանիշ և երիկամային հիվանդություններ: Մտահոգիչ է ՔԵՀ-ով HCV ինֆեկցված անհատներին բուժելու ապահով և արդյունավետ դեղերի պակասը /16/: Դժբախտաբար, լայնածավալ կլինիկական փորձեր HCV - նույնականացված երիկամային հիվանդության վերաբերյալ չկան: Ապացուցողական տվյալների վրա հիմնված ուղեցույցները չեն կարող կիրառվել այս պացիենտների պոպուլյացիայում: Այնուամենայնիվ, ներկայումս առաջարկվում է ոչ ՔԵՀ հետ համակցված HCV բուժման սխեմաները հարմարեցնել ՔԵՀ ունեցող պացիենտներին՝ համապատասխանեցնելով անհրաժեշտ դեղաչափը:

Երիկամի ընդգրկումը HCV-ի ժամանակ առավել հաճախ նույնականացվում է 2-րդ տեսակի կրիոգլոբուլինեմիայի հետ և կլինիկորեն դրսևորվում է պրոտեինուրիայով, միկրոհեմատուրիայով, ՋՀ և երիկամի վնասմամբ՝ մեղմից մինչ չափավոր: /17,18/

Երիկամային բիոպտատում ամենահաճախ հանդիպող պաթոլոգիական դրսևորումն է 1-ին տեսակի ՄՊԳՆ: /19/ Կարող է դիտվել նաև փոքր և միջին տրամաչափի երիկամային անոթների վասկուլիտ: Իմունաֆլյուորեսցենտ մեթոդը սովորաբար ցույց է տալիս IgM, IgG, C3 կուտակումներ մեզանգիումում և մազանոթի պատերում: Էլեկտրոնային մանրադիտակով սովորաբար դիտվում են սուբէնդոթելային իմուն կոմպլեքսներ և կարող են հայտնաբերվել կազմավորված ենթակառուցվածքներ՝ կրիոգլոբուլինների տեսակի: /18-20/

Բացի ՄՊԳՆ, գլոմերուլյար հիվանդության այլ ձևեր էլ են նկարագրվել՝ ներառյալ IgA նեֆրոպաթիան, ՄՆ, հետինֆեկցիոն ԳՆ, թրոմբոտիկ միկրոանգիոպաթիաներ, ՖՍԳՍ և ֆիբրիլյար ու իմունատակտիդ ԳՆ: /18-28/

Տիպ 2 կրիոգլոբուլինեմիայով պացիենտները (խառը պոլիկլոնալ IgG և մոնոկլոնալ IgM (RF դրական) կրիոգլոբուլիններ) պետք է թեստավորվեն HCV-ի նկատմամբ: Պրոտեինուրիայով և կրիոգլոբուլինեմիայով պացիենտները պետք է ստուգվեն HCV ՌՆԹ-ի նկատմամբ՝ նույնիսկ լյարդի հիվանդության կլինիկական և/կամ կենսաքիմիական տվյալների բացակայության պայմաններում: Նմանապես, HCV ինֆեկցված պացիենտները, HCV նույնականացված երիկամային հիվանդությունների համար, պետք է թեստավորվեն առնվազն տարեկան մեկ անգամ՝ պրոտեինուրիա, հեմատուրիա և eGFR: Ընդհանուր առմամբ, վերջերս տպագրվել են HCV ինֆեկցիայի բուժման գործնական ուղեցույցներ: /25/

Հիմնավորում

- Ø Առկա են միայն ցածր ապացուցողական տվյալներ HCV նույնականացված ԳՆ-ի բուժման վերաբերյալ: Բուժումը պետք է կենտրոնացված լինի վիրուսիռեպլիկացիայի նվազեցման կամ էլիմինացիայի վրա և HCV պարունակող իմուն կոմպլեքսների /ներառյալ կրիոգլոբուլիններ/ ձևավորման և գլոմերուլյար կուտակման նվազեցման վրա:
- Ø Առկա են միայն ցածր ապացուցողական տվյալներ, որոնք առաջարկում են ինտերֆերոնի և ռիբավիրինի չափաքանակի համապատասխանեցում՝ պայմանավորված երիկամային ֆունկցիայով:
- Ø Առկա են միայն ցածր ապացուցողական տվյալներ այն մասին, որ HCV - նույնականացված ԳՆ և ուժգին երիկամային դրսևորումներով պացիենտները պահանջում են լրացուցիչ բուժում իմունասուպրեսիվ դեղերով և/կամ կորտիկոստերոիդներով և/կամ պլազմայի փոխներարկում:

HCV-նույնականացված ԳՆ-ի լավագույն երկարատև կանխատեսման ինդիկատորն է տևական վիրաբուժական պատասխանը (բնութագրվում է որպես HCV ՌՆԹ-ի քլիրենս պլազմայից)՝ թերապիայի դադարեցումից առնվազն 6 ամիս հետո:

HCV-մոնոինֆեկցված պացիենտների շրջանում, նորմալ երիկամային ֆունկցիայի դեպքում, այս նպատակին կարելի է առավելագույնս հասնել պեգիլացված ինտերֆերոն IFN – α -2a/2b և ռիբավիրինի համատեղ կիրառմամբ, որն ավարտվում է շարունակական վիրահատական պատասխանով՝ 45-50 % հաճախականությամբ 1 և 4 գենոտիպերում, 70-80 %՝ գենոտիպ 2 կամ 3-ում: Սա ներկայացնում է HCV ինֆեկցիայի վարման ներկայիս ստանդարտը: /26-28/

HCV-նույնականացված ԳՆ-ի բուժական ռեժիմները և անհատական ազենտների դեղաչափերը տարբերվում են՝ պայմանավորված երիկամային հիվանդության ուժգնությունից: Դեղաչափի համապատասխանեցում $eGFR > 60$ մլ/ր պացիենտների համար չի պահանջվում: /26-28/

Առկա է սակավ տեղեկատվություն՝ HCV-ինֆեկցված $GFR < 60$ մլ/ր, բայց դեռևս ոչ դիալիզ ընդունող պացիենտների բուժման վերաբերյալ (ՔԵՀ 3-5 աստիճաններ): Առաջարկված դեղաչափերը հիմնված են մասնագետների կարծիքների վրա, ոչ ապացուցողականության՝ պեգիլացված ինտերֆերոն IFN – α -2b, 1 μ գ/կգ ենթամաշկային շաբաթական մեկ անգամ կամ պեգիլացված ինտերֆերոն(IFN – α -2a) , 135 μ գ ենթամաշկային շաբաթական մեկ անգամ, ռիբավիրինի հետ միասին 200-800 մգ/օրը, սկսելով ցածր դեղաչափերից և աստիճանաբար բարձրացնելով, քանի դեռ կողմնակի արդյունքները նվազագույնն են և կառավարելի /տես աղյուսակ 2/: Ռիբավիրինից երկրորդաբար զարգացող հեմոլիզը սահմանափակում է դրա դեղաչափը կամ կանխում դրա կիրառումը ՔԵՀ պացիենտների շրջանում: α – ինտերֆերոնով մոնոթերապիան օգտագործվել է կրիոգլոբուլինեմիկ ԳՆ-ի բուժման նպատակով և բերել է HCV ՌՆԹ-ի լիարժեք մաքրման և երիկամային ֆունկցիայի լավացման, այնուամենայնիվ, վիրեմիայի կրկնությունը և երիկամային հիվանդության սրացումները դիտվել են ինտերֆերոնի դադարեցումից հետո /29,30/: α - IFN - ի մոնոթերապիայի կիրառումով հաջորդական հետազոտությունները /30-33/ ցույց են տվել խառը արդյունքներ /30/: α -ինտերֆերոնով բուժումը կարող է սրացնել կրիոգլոբուլինեմիկ վասկուլիտը /34,35/: Այսպիսով, խորհուրդ է տրվում սկսել ինտերֆերոնն այն բանից հետո, երբ սուր բռնկումը վերահսկվում է իմունասուպրեսիվ ազենտներով: /36/

Առավել բարեհաջող ելքեր են դիտվել α -ինտերֆերոնի և ռիբավիրինի համատեղ կիրառումից /37-40/ և պեգիլացված ինտերֆերոնի և ռիբավիրինի համատեղ կիրառումից /36, 40-44/: Վերջերս կատարված մեթահետազոտությունում՝ վերահսկվող կլինիկական դիտարկումների, ուր համեմատվում էր հակավիրուսային vs. իմունասուարեսիվ թերապիայի արդյունավետությունը և ապահովությունը /ստերոիդներն առանձին կամ ցիկլոֆոսֆամիդի հետ համակցված/ HCV - նույնականացված ԳՆ-ի հետ համատեղ պրոտեինուրիան առավել նվազեց /odd ratio 3.86/, ինտերֆերոնի թերապիայից հետո /3 MU 3 անգամ շաբաթը առնվազն վեց ամիս /45/: Այնուամենայնիվ, երկու բուժումներն էլ մեծապես չեն լավացնում երիկամային ֆունկցիան: KDIGO վերջերս հրապարակված ուղեցույցերը, երիկամային հիվանդությամբ պացիենտների վիրուսային հեպատիտների բուժման համար, առաջարկվում է, որ չափավոր պրոտեինուրիայով և դանդաղ զարգացող երիկամային հիվանդությամբ պացիենտները բուժվեն 12 ամսվա ստանդարտ α -IFN կամ պեգիլացված IFN $-\alpha$ -2a կուրսով համապատասխանեցված դեղաչափով՝ գումարած ռիբավիրին՝ էրիթրոպոետինով կամ առանց դրա՝ պայմանավորված HGB-ի մակարդակով /42/: Անհրաժեշտ է տիրել ռիբավիրինի դեղաչափն ըստ պացիենտի տոլերանտության, հատուկ ուշադրության արժանի են <50 մլ/ր քլիրենսով պացիենտները, որը կարող է պահանջել զգալի իջած դեղաչափ:

Առկա են միայն ցածր ապացուցողական տվյալներ այն մասին, որ նեֆրոտիկ պրոտեինուրիայով և/կամ արագ զարգացող երիկամային հիվանդությամբ կամ կրիոգլոբուլինեմիայի սուր բռնկումով պացիենտները պետք է ստանան լրացուցիչ թերապիա կամ պլազմաֆերեզ (3 լիտր պլազմա, շաբաթական երեք անգամ, 2-3 շաբաթ), ռիտուքսիմաբ (375 մգ/մ² շաբաթական մեկ անգամ, 4 շաբաթ) կամ ցիկլոֆոսֆամիդ (2 մգ/կգ/օր, 2-4 ամիս) գումարած ն/ե մեթիլպրեդնիզոլոն՝ 0.5-1 գ/օր, 3 օրվա ընթացքում: /13/

Չկան համեմատական տվյալներ այս 3 լրացուցիչ թերապիայի ձևերից որևէ մեկի օգտին: Ստերոիդները կարող են հանգեցնել HCV վիրուսային ծանրաբեռնվածության մեծացման: /46,47/

Դեպքերի մեծ մասը ցույց է տվել ռիտուքսիմաբին ի պատասխան կրիոգլոբուլինեմիկ վասկուլիտով պացիենտների շրջանում պրոտեինուրիայի և երիկամային ֆունկցիայի զգալի նվազում: /48,49/

Չնայած որոշ պացիենտների շրջանում HCV վիրեմիան քիչ է աճել, այն մնացել է անփոփոխ կամ նվազած մյուսների շրջանում և ընդհանուր բուժումը գնահատվել է որպես անվտանգ: /50/ Ծանր ռեֆրակտեր HCV համակցված կրիոգլոբուլինեմիկ վասկուլիտով 16 պացիենտների դիտարկումները, ովքեր բուժվել են ռիտուքսիմաբով պեգիլացված IFN – α -2b-ով և ռիբավիրինով, նույնպես ցույց են տվել լավ պատասխան: /51/ Ախտանիշները սովորաբար կրկին հայտնվում են պերիֆերիկ B բջիջների վերականգնման հետ մեկտեղ: Ռիտուքսիմաբի բազմակի կուրսերի տևական անվտանգությունը HCV պացիենտների մոտ ակնհայտ է: Մնում է վիճելի, արդյոք, հակավիրուսային թերապիան պետք է սկսվի իմունասուպրեսիայի հետ միասին, թե հետաձգվի մինչև կլինիկական ռեմիսիայի գրանցումը: /52-54/

Վերահսկվող հետազոտությունները HCV-նույնականացված ԳՆ-ի վերաբերյալ սակավ են, առկա են հիմնականում հետհայաց հետազոտություններ: Առկա տվյալների մեծամասնությունը ստացված են արտահայտված պրոտեինուրիայով, հեմատուրիայով կամ նվազած երիկամային ֆունկցիայով պացիենտներից:

Աղյուսակ 2

HCV վարակի բուժումը՝ պայմանավորված ՔԵՀ փուլերով

ՔԵՀ փուլերը	ԻՖՆ ^a	Ռիբավիրին ^b
1 - 2	Պեգիլացված ԻՖՆ α -2a: 180 μ g ԵՄ ամեն շբթ Պեգիլացված ԻՖՆ α -2b: 1.5 μ g/կգ ԵՄ ամեն շբթ	800-1200 մգ/օր օրական 2 անգամ
3 - 4	Պեգիլացված ԻՖՆ α -2a: 135 μ g ԵՄ ամեն շբթ Պեգիլացված ԻՖՆ α -2b: 1 μ g/կգ ԵՄ ամեն շբթ	*
5	Պեգիլացված ԻՖՆ α -2a: 135 μ g ԵՄ ամեն շբթ Պեգիլացված ԻՖՆ α -2b: 1 μ g/կգ ԵՄ ամեն շբթ	*

hGFR-հաշվարկված կծիկային ֆիլտրացիայի արագություն, ԻՖՆ-ինտերֆերոն, ԵՄ-ենթամաշկային, ամեն շաբաթ-ամեն շաբաթ

a – 1 և 4 գենոտիպերով պացիենտները պետք է ստանան ԻՖՆ թերապիա 48 շաբաթվա ընթացքում, եթե վաղ պատասխանը վիրուսի հանդեպ դիտվում է 12 շաբաթ ժամկետում (վիրուսային տիտրի >2 լոգ նվազում): 2 և 3 գենոտիպերը պետք է բուժվեն 24 շաբաթվա ընթացքում:

b – 2 և 3 գենոտիպերով պացիենտները պետք է ստանան 800 մգ/օր ՔԵ< 1 և 2 փուլերում: Գենոտիպ 1 և 4 – ով ինֆեկցված պացիենտները պետք է ստանան 1000-1200 մգ/օր ՔԵ< 1 և 2 փուլերում:

* Սկսած KDIGO-ի՝ հեպատիտ C ՔԵ<-ի ժամանակ ուղեցույցի հրապարակումից՝ ապրանքապիտակի փոփոխություններն այժմ թույլ են տալիս ռիբավիրինի մրցակցային կիրառում ՔԵ< 3-5 փուլում պացիենտների մոտ, քանի դեռ կողմնակի արդյունքները նվազագույն են և կառավարելի: Զգուշությունը խորհուրդ է տրվում < 50 մլ/ր քլիրենսով պացիենտներին, որը կարող է պահանջել էականորեն նվազած դեղաչափ:

3. ՀԵՊԱՏԻՏ B – ՄԻՋՆՈՐԴՎԱԾ ԳՆ

3.1. Խորհուրդ է տրվում, որ հեպատիտ B-միջնորդված ԳՆ-ով պացիենտները բուժվեն α -ԻՖՆ-ով կամ նուկլեոզիդների նույնանմաններով, ինչպես առաջարկվում է հեպատիտ B ինֆեկցիայով պացիենտների վարման ստանդարտ կլինիկական գործնական ուղեցույցներում: /տես աղյուսակ 3/ /1C/

3.2. Խորհուրդ է տրվում վերոնշյալ հակավիրուսային ազեոնների դեղաչափը համապատասխանեցնել երիկամային ֆունկցիային: /1C/

Նախաբան

Աշխարհի բնակչության մոտ 1/3-ն ունի անցյալում կամ ներկայումս շճաբանականորեն հաստատված հեպատիտ B ինֆեկցիա, 350 մլն մարդ քրոնիկական ինֆեկցված են, ինչը դարձնում է հեպատիտ B-ն ամենաբնորոշ մարդկային պաթոգենը: /55,56/ Հիվանդության սպեկտրը և քրոնիկական հեպատիտ B-ի ինֆեկցիայի բնական պատմությունը բազմազան և փոփոխական են՝ սկսած ցածր վիրեմիկ ոչ ակտիվ վիրուսակրությունից մինչև քրոնիկական հեպատիտի զարգացում, որը կարող է հանգեցնել ցիռոզի և լյարդաբջջային կարցինոմայի: Հնարավոր չէ կանխորոշել, թե

հեպատիտ B-ի ինֆեկցիայով որ պացիենտների կզարգանա երիկամային հիվանդություն: /57/

Հեպատիտ B միջնորդված ԳՆ-ն ընդգրկում է ՄՆ, ՄՊԳՆ, ՖՍԳՍև IgA նեֆրոպաթիա: ՄՆ հանդիսանում է հեպատիտ B-միջնորդված ԳՆ-ի ամենաբնորոշ տեսակը, հատկապես, երեխաների շրջանում: Հեպատիտ B միջնորդված ԳՆ ախտորոշելու համար անհրաժեշտ է վիրուսի հայտնաբերում արյան մեջ, ինչպես նաև գլոմերուլյար հիվանդության այլ պատճառների բացառում: Երեխաների շրջանում այն ունի բարենպաստ կանխատեսում՝ ինքնակա ռեմիսիաների բարձր հաճախականությամբ, իսկ մեծահասակների շրջանում հեպատիտ B-ն սովորաբար պրոգրեսիվող է:

Նեֆրոտիկ համախտանիշով և լյարդի ոչ նորմալ ֆունկցիոնալ թեստերով պացիենտներն ունեն առավել վատ կանխատեսում, >50% մոտ կարճ ժամկետներում զարգանում է տերմինալ քրճ: /58/ Չկան ՊԲՎՓ-ներ հեպատիտ B միջնորդված ԳՆ-ի վերաբերյալ, ուստի, ապացուցողական բժշկության վրա հիմնված բուժական ուղեցույցներ չեն մշակվել: Որոշ կլինիկական պրակտիկ ուղեցույցներ քրոնիկական հեպատիտ B-ի վարման վերաբերյալ վերջերս տպագրվել են Եվրոպայում և ԱՄՆ-ում, սակայն դրանք չեն ներառում առանձնահատուկ սխեմաներ հեպատիտ B միջնորդված երիկամային հիվանդության վարման վերաբերյալ: /55,56/

Հիմնավորում

Ցուցված է հեպատիտ B միջնորդված ԳՆ-ի բուժում ինտերֆերոնով և նուկլեոտիդների նույնանմաններով:

Ներկայումս հասանելի են բազմաթիվ դեղեր քրոնիկական հեպատիտ B ինֆեկցիայի բուժման համար (**աղյուսակ 3**): Այս դեղերի արդյունավետությունը գնահատվել է ՌԿՀ-ներում 1 տարվա ընթացքում (2 տարի տելբիվուդին): Առավել երկար հսկողությունը (մինչև 5 տարի) հասանելի է լամիվուդին, ադեֆովիր, էնտեկավիր, տելբիվուդին, տենոֆովիր ստացող պացիենտների ենթախմբերում: /55/ Այնուամենայնիվ, հեպատիտ B ինֆեկցիայի առաջարկված բուժական սխեմաների արդյունավետությունը գնահատող տվյալներ հեպատիտ B-միջնորդված ԳՆ-ի համար դեռևս չկան: Հեպատիտ B-միջնորդված ԳՆ-ով պացիենտների բուժումը պետք է անցկացվի հեպատիտ B

ինֆեկցիայի բուժման ստանդարտ գործնական ուղեցույցների համաձայն: Նուկլեոզիդային նույնանմանների նեֆրոտոքսիկությունը (ադեֆովիր և տենոֆովիր) մտահոգիչ է:

Աղյուսակ 3

HBV ինֆեկցիայի դեղերի դեղաչափերը՝ երիկամային ֆունկցիային համապատասխան (էնդոգեն ԿՔ)

Դեղ	ԿՔ > 50 (մլ/ր)	30 < ԿՔ < 50 (մլ/ր)	10 < ԿՔ < 30 (մլ/ր)	ԿՔ < 10 (մլ/ր)
Լամիվուդին	300 մգ բ ամեն օր կամ 150 մգ բ օրը 2 անգամ	150 մգ բ ամեն օր	150 մգ առաջին դեղաչափը, այնուհետև 50 մգ բ ամեն օր ^a	150 մգ առաջին դեղաչափը, հետո 50 մգ բ ամեն օր ^b
Ադեֆովիր	10 մգ բ ամեն օր	10 մգ բ ամեն 48 ժամ	10 մգ բ ամեն 72 ժամ	դեղաչափ չի առաջարկվում
Էնտեկավիր	0.5 մգ բ ամեն օր	0.25 մգ բ ամեն օր	0.15 մգ բ ամեն օր	0.05 մգ բ ամեն օր
Էնտեկավիր լամիվուդին – ռեֆրակտեր պացիենտների մոտ	1 մգ բ ամեն օր	0.5 մգ բ ամեն օր	0.3 մգ բ ամեն օր	0.1 մգ բ ամեն օր
Տելբիվուդին	600 մգ բ ամեն օր	600 մգ բ ամեն 48 ժամը մեկ	600 մգ բ ամեն 72 ժամ	600 մգ բ ամեն 96 ժամ
Տենոֆովիր	300 մգ բ ամեն օր	300 մգ բ ամեն օր 48 ժամը մեկ	300 մգ բ ամեն օր յուր. 72 -96 ժամ	300 մգ բ շաբաթը մեկ անգամ

ԿՔ – կրեատինինային քլիրենս, բ – բերանով ընդունման ձևով

a ԿՔ < 15 մլ/ր, 150 մգ առաջին դեղաչափը, այնուհետև 50 մգ բ-ի ամեն օր

b ԿՔ < 5 մլ/ր, 50 մգ առաջին դեղաչափը, այնուհետև 25 մգ բ ամեն օր

4. ՄԻԱՎ ՎԱՐԱԿ–ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԳԼՈՄԵՐՈՒԼՅԱՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Խորհուրդ է տրվում բիոպսիայով հաստատված ՄԻԱՎ-առոցացված նեֆրոպաթիայով բոլոր պացիենտներին սկսել հակառետրովիրուսային թերապիա, անկախ CD4 մակարդակից: (1B)

Առկա տվյալներ

Տարեկան մոտ 5 մլն մարդ ինֆեկցվում է ՄԻԱՎ-ով: /60/ Երիկամային հիվանդությունը ՄԻԱՎ-վարակով պացիենտների մոտ հարաբերականորեն հաճախ հանդիպող բարդություն է: ՄԻԱՎ-նույնականացված նեֆրոպաթիան /ՄԻԱՎ-ԱՆ/ ՄԻԱՎ-1-ով պացիենտների մոտ / ՔԵՀ ամենահաճախ պատճառն է և, մեծամասամբ, դիտվում է Աֆրիկյան ծագման պացիենտների մոտ /61,62/, ենթադրաբար, կապված 22 քրոմոսոմի APOL1 գենի լոկուսի տարբեր շեղումների զգայունության հետ, խիստ նույնականացված MYH9 լոկուսի հետ:/141,63/ Չբուժված ՄԻԱՎ-ԱՆ արագորեն պրոգրեսիվում է մինչև տերմինալ ՔԵԱ: Տիպիկ դեպքերում ՄԻԱՎ-ԱՆ պաթոլոգիան ընդգրկում է ՖՍԳՍ, հաճախ կոլապսոզ տեսակի՝ ուղեկցվող խողովակների միկրոկիստոզ փոփոխություններով: Սովորաբար էլեկտրոնային մանրադիտակով հայտնաբերվում են տուբուլոռետիկուլյար կառուցվածքներ: Ի լրացումն ՄԻԱՎ-ԱՆ–ի, նկարագրվել են բազմաթիվ այլ ՄԻԱՎ նույնականացված երիկամային հիվանդություններ /61,64,65/: ՄԻԱՎ–ով պացիենտների շրջանում պրոտեինուրիան և/կամ նվազած ԵՖ կապված են բարձր մահացության և հիվանդության առավել վատ ելքի հետ: /66/ Բազմաթիվ ՊԲՎՓ – ների տվյալները ցույց են տվել, որ բարձր ակտիվությամբ հակառետրովիրուսային թերապիան /ԲԱՀՎԹ/ շահավետ է ՄԻԱՎ պացիենտների ԵՖ-ի պահպանման և բարելավման գործում: /67-69/ Երիկամների դիսֆունկցիայով պացիենտները ԲԱՀՎԹ սկսելուց անմիջապես հետո ունենում են ԵՖ-ի « դրամատիկ» լավացում /70,71/: ՄԻԱՎ–ի վիրուսային ծանրաբեռնվածության նվազումը ԲԱՀՎԹ-ի ժամանակ նպաստում է երիկամային ֆունկցիայի բարելավմանը, մինչդեռ, դրա ավելացումը նույնականացվում է ԵՖ-ի վատացման հետ: /72-74/

Հիմնավորում

Առկա են ցածր ապացուցողական տվյալներ, որոնք առաջարկում են կատարել երիկամային բիոպսիա՝ սահմանելու երիկամային հիվանդության սպեցիֆիկ տեսակը ՄԻԱՎ-վարակով պացիենտների շրջանում:

ԲԱՀՎԹ կարող է արդյունավետ լինել ՄԻԱՎ-ԱՆ պացիենտների շրջանում, սակայն արդյունավետ չէ ՄԻԱՎ վարակ-նույնականացված այլ ԳՆ դեպքում:

